

**Հ Ե Տ Ա Ձ Ո Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր**

<i><b>h.h</b></i>	<i><b>Հեղազոտության անվանումը</b></i>	<i><b>Անցկացման ժամկետը</b></i>	<i><b>Նպատակը (հիմնավորումը)</b></i>	<i><b>Նյութերի ամփոփման ավարտը</b></i>
<i><b>1</b></i>	<i><b>2</b></i>	<i><b>3</b></i>	<i><b>4</b></i>	<i><b>5</b></i>
1	Հացահատիկի բերքահավաքի որակը	հուլիս-սեպտեմբեր	Համապատասխան տեղեկանքների մշակման միջոցով հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ժամանակ կորուստների հաշվառումը	նոյեմբեր
3	Տնային տնտեսություններն սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների (SSUNԱԿ) գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ հետազոտություն	2016 թվականի IV եռամսյակ	Հայաստանում ազգային հաշիվների համակարգի տվյալների բազայի արդիականացման, չդիտարկվող տնտեսության գնահատականի և ՀՆԱ-ի ամբողջականության բարելավման նպատակով	I եռամսյակ
3	Կազմակերպությունների ֆինանսական ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի վերաբերյալ (ըստ տնտեսության հատվածների բաշխվածության) հետազոտություն	II եռամսյակ	Հայաստանում ազգային հաշիվների համակարգի ֆինանսական հաշվի կազմման համար տեղեկատվական բազայի համալրում	IV եռամսյակ
4	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն	հունվար-դեկտեմբեր	Հայաստանում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ տեղեկությունների ստացումը  Հայաստանի Հանրապետությունում աղքատության և աշխատանքի շուկան բնութագրող առանցքային ցուցանիշների փոխադարձ ազդեցության գնահատումը, հիմնական սոցիալական ծառայությունների (կրթության և այլնի) մատչելիությունը	2018 թվականի ընթացքում  -,,-
5	Աշխատուժի հետազոտություն	հունվար-դեկտեմբեր	Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկան բնութագրող տեղեկատվության ապահովումը՝ աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ (աշխատուժի), տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թվաքանակը, զբաղվածությունը <i>ըստ տնտեսության տարբեր ոլորտների</i> (այդ թվում նաև ոչ ֆորմալ), գործազրկությունն ըստ ժողովրդագրական, կրթական <i>մակարդակի, մասնագիտական ուղղվածության</i> , սոցիալ - տնտեսական և այլ բնութագրերի՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությանը համապատասխան	2017-2018 թվականների ընթացքում
6	Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն (Ամերկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ)	2015 թվականի սեպտեմբերից մինչև 2016 թվականի մարտ	Բնակչության, առողջության և սնուցման վերաբերյալ տվյալների վերլուծությունը և մշակումը, պլանավորման քաղաքականության մշակման և ծրագրերի իրականացման ընթացքում տվյալների կիրառման խթանումը	հունիս-հուլիս